ԱՐԾՈՒԻ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ

ԹՌՈՒՑԵԱԼ ՀԱՅՐԵՆԱՍԻՐ ԹԵՒՕՔ
ՑԱՐԾՐԱՅՆԻ ՄԵՆԱՍՏԱՆԻՆ ՎԱՐԱԳԱՅ

ԽՄԲԱԳՐԵԼ ՀԱՅՐԵՆԱՒՕՄ
ՄԿՐՏԻՉ ՎԱՐԴԱՊԵՏ ԽՐԻՄԵԱՆ

1862 ՀԱՏՈՐ ԶՈՐԲՈՐԴ ՈՒՏԱԼ
ՎԱՆԷՏՈՍՊ
Ի ՏՊԱՐԱՆԻ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ ԱՐԾԱՒՈՅՆ
Ի ՎԱՐԱԳ

ՄՈՍԿՈՎԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Հայրենեաց յիշատակներ կանգնեն։ Այս դեր ի վերոյ եւ անհատ անձինք են անոնք, որ հիմներ ու սահմաններն մի Հայրենիք ազգիմը համար. մի աշխարհ Ժողովրդեանմը համար. եւ այն հիմունքն ու սահմանը չափերեն իրենց նիզակով ամրացուցերեն իրենց արիւնով։ Այսպիսի հոգիք կարծես ինչպէս անհատ են մարդկանց մէջ, նոյնպէս եւ անհատ են ստեղծուած Արարչէն։

Ուստի սիրտը մի հաստատուն սիւն է երկրիս վերայ. որոյ վերայ կառուցուած է Հայրենեաց շինութիւն. եւ մի ամբողջ ազգ կ բնակի ու կ զուարճանայ նորա հովանեաց։ Մի տուն է, որոյ մէջ երկնից թագաւոր եւ մարդկային սիրոյ հոգիք կ օթագային. վերջապէս մարդ՝ որ երկրիս մէջ վեհ եւ անհատ, երկնից մէջ մեծ եւ անմահ վիճակ ու վախճան ունի։

Արդ մեք եւս մի ազգ. ունիմք արդեօք մեզ համար Հայրենիք. անշուշտ, վասնզի ունիմք նաեւ մեզ նախնիք. նախնիք որ անուան են եղեր փառաւոր, ձիրաւորութեամբ, զօրութեամբ, մեծութեամբ, անուանով եւ Աստուծով։ Ա՛ս պիսով եւ առանցմով սկսած է մեր ազգը, կանգնած է մեր Հայրենի՛ք—Հայն եւ իւր Հայաստան։

Հայրենեաց յիշատակ իւր ազնիւ եւ բարի որդիքն են. եթէ Հայրենիքմը կ շինուի իւր որդիքներով է. եթէ կ յիշատակուի իւր որդիքներով է. եւ թէ կպահպանուի գարձեալ իւր որդիքներով է։ Ահա էր Հայաստան, փառաւոր եւ հզօր էր մեր Հայաստան. վասնզի ունէր արժանաւոր որդիք. ինքն կպահպանէր զանոնք, եւ նոքա կ փառաւորէին զինքը։

Ձկար խորութիւն Հայուն եւ Հայումը մէջ. կ մեռնէր եղբայր եղբօր համար. կ մեռնէր մարդ Հայրենեաց՝ հա-

մեր. եւ այսպէս կ սատակէին Թշնամին, կ մեռուցանէին ո-
սոխն, կապրէին երջանիկ կ ապրէին ապահով։

Հայկն իւր հայերով, Արամն իւր սրիական զօրքերով,
Տիգրան իւր տիգաւ եւ սիպուտներով սատակեցին Բել,
բռնեցին Նիւքարն, սատակեցին Աժդահակ. սրբեցին Հա-
յաստան, պայծառացուցին նորա անուանն ու պարծանք։

Վաղարշակմը, իմաստութեամբ եւ զօրութեամբ մեծ,
կամեցաւ եւ կարողացաւ վերականգնել անկեալ Հայկա-
զանց թագն ու փառքը. սահմանել պահպանել կրկին
Հայաստանի իրաւունքներ եւ բարեվայելչութիւնները։
Արտաշէս մի չ կրցաւ մեռալ անյիշատակ. իւր կենաց
պարոք առ իւր Հայրենին կ փափագէր վճարել. բայց
Հայրենին արդէն լցուած էր ամէն կերպ բարիքներով.
կայծեռ փնտռեց ու չգտաւ տեղ մէջ Հայաստանին. ուս-
ի տարաւ սխռեց մինչեւ ի Պոնտոս Սեւ ծովուն երես եւ
մինչեւ Թրակիա իւր յիշատակները։

Տրդատն որ գերազանցեց իւր տոգաբերքն եւ իւր ե-
րախտիք Հայրենեաց համար շինելով յիշատակ. հետ Լու-
սաւորչին վաստակեցին կանգնեցին ոչ միայն կարգ եւ
փառք աշխարհի. այլ եւ երկնից մէջ Հայաստանի յիշատակ
բարձրացուցին. Հայերու համար մի նոր դուռ բացին,
որով երկինքն ու Հայաստան իրար խառնեցին։

Այսպիսի հոգիք շատ ծներէ մեր մայր Հայաստան, որ
արիւնով եւ նիզակով արիւնով եւ շնորհքով շինեցին
յիշատակ Հայրենի. յիշատակ որով կ ապրիմք մեք կենդա-
նի. յիշատակ որով Հայն այսօր Հայ կ անուանվի։ Հայկէն
մեր անուն Հայ. Արամէն մեք Արամեան. Վաղարշակէն
Արշակունեանք։ Ի՞նչտեղ է այն, որ կ անուանեմք Հայոց
աշխարհ։ Ի՞նչ տեղի անունն է Հարք գաւառ։ Ինչի՞ այն տեղին

կասեմք Արմաւիր։ Ինչի՞ Վաղարշապատ։ Ինչի՞ է Այ-
րարատ։ Որոց ձեռքով կանգնած են երկնասարս կա-
թուղիկէք եւ հոյակապ կամարք սուրբ սուրբ տաճարաց։
Ո՞վ էր մեզ ուսուցեր Քրիստոնէութիւն, որ նորա շաւղով
անմահութեան կենաց ու փառաց հասանիք։ Ո՞վ էր որ
երկնից Արարչին ծանօթ եւ սիրելի ըրաւ մեզ։ Ո՞յք էին
որ մեզ լեզու եւ դիր ուսուցին. ի՞նչ շնորհքով գտան. ինչ
վարդապետեր եւ աքնուութիւններ արին։ Ի՞նչ անձինք էին
անոնք. որ յանուն Աստուծոյ եւ Ազգին իրենք մեռան
իրենց արիւն և արեամբ զոհեցին ու զմեզ կենդանի պահեցին։
Ահա տեսք մեր վիհև մեր սրբազան նախնիք, որ յիշատակ-
ներով զարդարեցին անմահ ոգուցին իրենց եւ մեր Հայրենիք։

Ուրեմն եւ մեք, ամէն Հայու որդիք. արդի Ազգայինք,
ահա տեսանք մեր նախնեաց երախտիք, Հայրենեաց հա-
մար թողուցած յիշատակ եւ բարիք. ուրեմն մե՞ք ինչ ա-
նենք. ամօթ չէ՞ արդեօք որ մեր անյիշատակ ապրիմք ու
անյիշատակ մեռնիմք. այս ոչ միայն ամօթ. այլեւ մեծ
մեղք է. վանզի մեք եւս կոչրիմք Աստուծով եւ Հայրե-
նիքով. ուրեմն մեք եւս մի պարտ ունիմք վճարել Աստու-
ծոյ եւ Հայրենեաց մեր այս աշխարհիս մէջ վարած ըն-
թացքով։

Արդ ինչ անենք, մէկ մէկ Հայկ լինիք. ոչ, այլ գէթ
Հայ լինիք եւ Հայկայ յիշատակները պահպանենք։

Չնվք կարող, եւ մեր վիճակն ու ժամանակ չէ Լու-
սաւորիչ լինել. տանջանք տարի Վիրապի մէջ ձգնել եւ
ազգը ի խաւարէ ի լոյս Աստուածային հանել. այլ գոնէ
այն լոյսը մեր կենաց եւ փրկութեան աւաջնորդը չխաւա-
բեցնենք. նորա սուրբ եւ պայծառ ճանապարհով հետե-
լինք մեր նախնեաց։

Հեռեւեալ տեղեկութիւն հաղորդուած է մեզ Աղէքսանդրապոլէն, զոր կգրէ Վ. Արծրունի գործակալ արժանապատիւ եւ ուսումնասէր Տ. Սիմէոն քահանայն Ղազիեանց։ Ուրախութեամբ սրտի կ հրատարակենք եւ կ հրաւիրեմք մեր Աղգայինք մանաւանդ մեր Հայրենակիցք հետեւող լինել այսպիսի բարեսիրտ եւ միանգամայն ազգօգուտ գործոյ, որոյ հարկ եւ պարտքը մեծագոյն զգալիք ամէն հասկացող եւ կարող բարեսիրտ անձանց։

ԱԶԳԱՅԻՆ ԱՂՔԱՏԱՆՈՑ

ԿԱՄ

ԱՂՔԱՏԱՑ ՀՈԳԱՏԱՐՈՒԹԻՒՆ ԱՂԷՔՍԱՆԴՐԱՊՕԼՍՈՒ ՄԵՋ

. . . Սրանից մէկ տարի յառաջ քանի որ աղքատանոց չկար մեր քաղաքը այս մասին շատ անկարգ վիճակի մէջ կ գտնուէր. աղքատաց թիւ երկու հարիւրից աւելի կլինէր. ամէն օր կշրջէին քուչէքուռմ փողոցներուռմը. օր մէկ տուներ մէկ կրպակը տասից աւելի համարեա աղքատ մրանէին կ եղնէին. թէպէտ այսահղաց Հատարակու թեան մեծ մասը ջերմեռանդ լինելով առ աղքատս գտատրկաձեռն չէին երեւիր, այս առածի մաօք, որ համարեա բոլորն էլ գիտեն թէ « Տուր ոսկեգօտուն մի քիներ » ։ Բայց ինչ ասենս որ սրանց առատաձեռնութեան յուսալով շատ ծոյլ եւ սղջանգամ մարդիկ իրենց գործերը թողնելով մուրացկանութեամբ կ պարապէին. մինչեւ անգամ սրանց մէջ կը գտնուէին կարողութեան տէր մարդիկ։ Եւ մէկ աղքատիմ միայ հաւատի տեղեակ էի, որ հինգ հարիւր մանէթ ուրեշին շահով էր տուել, սակայն ինչքան կնախատէին՝ ձեռք չէր վերցնում։ Շատ ողջանգամ աղքատաց կ խոտանային տարեկան վարձ իրանց հագուստ եւ ուտելիք տան, միայն

նոյանից որ կաղ էր, որ կոյր, որ անդամալոյծ, որն էլ շատ որբոց տէր. սրանց ամենին իրանց բաւականութեան չափ ամսական թոշակ նշանակեցին, հիմա էս մասին մեր քաղաքը բարեկարգութեան մէջ է եւ օր աւուր վերայ ինչպէս կ նշմարուի ծուլութիւն նուազում է. ամէն մարդ աշխատում է իրան ճակտի քրտինքով իրան հացը գտնել. եւ անառակ տղէրքի շատը թողել են խապառ իրանց առաջուայ սանձարձակութիւնը։

Այս աղքատանոցի արդեանց տղերքն են մեծ մասը հասարակութեան սանտֆիների տուրքը, որոնք որ ամէն ամիս իրանց կարեոց չափ ուսթապաշիի ձեռքով կ հաւաքուին եւ կ յանձնուին աղքատանոցի Հոգաբարձուց։ Կան նոյնպէս ազնուականների ատոր ճանաչուորների մէջ մէկ քանի անձինք, որոնք որ ամսական երեք կամ երկու մանէթ կատան աղքատանոցին. իսկ մնացածները տակաւին ձեռնտուութիւն չեն արած։ Նոյնպէս էլ եկեղեցւոյ մէջ ինչքան Օրինակատարութիւնք պատահին թէ պսակ, թէ կնունք եւ թէ ննջեցեալ. այնպէս է կարգադրուած. տեղւոյս Առաջնորդ Ս. Մովսէս արք Եպիսկոպոսից որ սրանք ամէնն էլ ձեռնտուութիւն անեն։

Այսպիսի Աստուածահաճոյ գործի վերայ, ոչ թէ միայն մարդիկ այլ հրեշտակներն անգամ կ ուրախանան. եւ Աստուած իրան սթոռից կ օրհնէ այնպիսի մարդկերանց գործը եւ կ փառաւորի. ըստ այնմ թէ «Տեսցեն զգործս ձեր բարիս եւ փառաւորեսցեն զՀայր ձեր որ յերկինս է։

Սուրբ Հայր. ես ուրախութեան հոգւով լցուած իմ հայրենեաց մէջ այսպիսի Աստուածահաճոյ եւ օգտակար բարեկարգութիւնքը տեսնելով, ցանկացայ հաղորդել ձեզ. գիտելով որ դուք էլ կ սիրէք եւ ուրախ կ լինիք այսպիսի

ներ մեզ։ Մինչեւ ցնորք Հայոց ազգի հոգիք կապուած այսպիսեաց ձեռքով մեր լուսաւոր կրօնքից եւ աշխարհի ամէն կերպ փառքից զրկուած մնան։ Քրիստոնէութիւն, որչափ ալ հեռեւօղներ ունիս աշխարհիս մէջ։ Եւ այդ հաւատքն է որ զձեզ մեր տէրութիւնից կ՚խլեն՝ ցուցէ, իսկ ուրիշներուն մեր ձաւոր կ՚ի է։

Սահակ Սահակ, գիտեմ ես քո ամէն սրտմտութիւդ։ Բ գաղտնի խորհրդոց ի դէպ Յունաց կայսերութեան հետ։ Ահա ես եւ քո ողջ աշխարհ կ՚պատապարտեմք քեզ, ահա առ հասարակ Հայասատանի իշխանք եւ քահանայք քեզնից գանգատաւոր են։ Արտաշիրն պաշտպան ես. Արտաշիր պատուհասն ալ պիտի կլիս։

Դառնալով սենեկապետին կամ.

Կանչեցէք Հայոց նախարարները ներս։

Մտանեն նախարարք։

ՎԱՌԱՄ

Ո՞ւր է Սուրմակ երէց ամենարժան քահանայն։

ՍՈՒՐՄԱԿ

Ահաւասիկ եմ տէր սրբոյ, ձեր ծառայ, ձեր մեծութեան ամենահաւատարիմ ծառայ։

ՎԱՌԱՄ

Ողջ կացէք։ Ողջ լերուք եւ դուք պատուական նախարարք Հայոց։ Ձեր բողոքներ հաւատարիմ եղան. աւագ իշխանք, ահա այժմ ստուգվեցան Արտաշիրն եւ Սահակայ

ՄՈԳՊԵՏՔ

Վռամ տէր, ինչի՞ կ յապաղէք. վերջացուցէք վերջացուցէք գործը։ Այս քանի անգամ է առեան յատուկ ասողք համար կբացուի։ Աստուածներ մեզ վերայ կցանուն. աստուածներ մեզի տեսիլքներով եւ ցոյցերներ տեղեկներով կերեւնան մեզի աստուածներ. կ խօսեն, պատգամ կուտան։ Դուք, տէր Վռամ, գթացէք Հայոց աշխարհին. վերցուցէք Արշակունին. վերցուցէք թագ նորա գլխէն. աստուածոց կամքը փութացէք կատարել։ Փութացէք եւ այս, այս Սահակ պարթեւը իւր մեծութեան ժառանգական կարգուղիկոսութիւնից հանել։ Հանէք Սահակ կարգուղիկոսական իշխանութիւնից. եւ Արտաշիրն իւր թագաւորութիւնից։

ՎՌԱՄ

Որմի՞գդ, տէր երկնից; պատրաստ եմ; պատրաստ եմ. եւ ղիցին կամք ձեր։ . . .

Ծառայից գառնալով

Առէք Արտաշիր։ բարձէք թագը. հանէք սուսեր։ խլեցէք գաւազան։ կողոպտեցէք զարդերը. մերկացուցէք քղամիդ. խոնարհեցուցէք պարանոց. փշրեցէք ծղամանեակներ. մանրեցէք ապարանջաններ. կտրեցէք շղթաներով բազուկները։ պնդեցէք զնդանով ոտներ։ Արտաշիր այսուհետև գերիւ։

Գերի է Արշակունին. խուժասան իւր վիճակ. չարչարանք իւր բաժին. եւ մահ իւր վախճան։

Անոր աթոռ կոչանվի. անոր կալուածներ Արքունի. եւ ինչ որ ունի այստեղ պիտի բերվի։ Ալ Հայաստանի մէջ

Դառնալով առ Նախարարս և առ Սուրմակ.

Ահա փոխանակ Սահակայ Սուրմակ. Սուրմակ թող լինի ինչ որ էր Սահակ. իշխան ամենայն հոգեւորականութեան. հրամայող. օրէնդիր. աթոռակալ. պետ. մեծ. եւ ամենայն ըստ ամենայնի։ Քեզ նայիմ Սուրմակ. այսուհետեւ քահանայապետ Սուրմակ, այնպէս ապա՛ եւ այ. պէս կաց. որ ոչ ինչպէս դու Սահակին համար, ուրիշներ ալ քեզի համար գանգատներ առնեն բերեն Արեւոցս դուռը, դու ինքդին խելամուտ ես եւ խորագէտ; վարվիր ամբասիր ըստ ձեր օրինաց. խորհրդակից եւ կամակատար Վեհ Մեհրշապհոյ կամաց, հաւատարիմ եւ միշտ հաւատարիմ Արեւոցս դրան նոյնպէս անսացող եւ այս նախարարաց։

Դառնալով առ ծառայս.

Կատարեք վաղվաղակի ինչ որ ասացի։
Բերեք ոսկի Հայոց աւադ արանց։
Բերեք նշան պարգեւաց մեր հաւատարիմ սիրելեաց։
Բերեք պսակ Մեհրշապուհին, եւ դաւազան Սուրմակին։

Ծառայք կ սրսին մերկացուցանել եւ կողոպտել զԱրտաշիրն. շրթանեբով կ փակեն բաղուկներ եւ զնդանով ոտները։ Արտաւիրը դոնացած դեմքով գլուխը կախած կուլայ, աչքերը շուտ շուտ Ս. Սահակին կը ձգէ. Սուրբն իւր աչքունք դարձուցած մի՛մը Նախարարաց վերայ. մի՛մը Արտաշրի վերայ, եւ մի՛մը Վռամին եւ իւր ատենին. հեզ հեզ կարտասուի։ Դառն եւ մորմնջելի հառաչանքներ կարձակէ. երկինք կ հայի եւ կ խոնարհի. վշտալի տեսիլներ եւ ապագայ ալէտներ Հայաստանին կը նկատէ. աղօթիկ մրմունջ առ Աստուած կարձակէ։

Ոսկիներ. պարգեւներ կ մատուցվին Հայ նախարարաց. պսակ Մեհրշապուհին. եւ պարգեւ Սուրմակին։ Ապա կ տանեն Արտաշիր վարել

քուշ մարդերուն վերայ կ հանդչէի։ Իմ ընկերներս պատա-
նիք եւ երիտասարդք. քո քաջազուն որդիք քաջալերն նե-
տաձիգ։ Ո՞ւր է քո գիրին, քո բաժակն ուրախարար. ուր
է քո սեղան մեծախորտիկ եւ առատահամ, քո անրսպառ
եւ քաղցր բարութիւնք։ Քո սիրուն մանկիկք, քո գլու-
սերք գեղեցիկ, արդեօք կուլան իրենց Արտաշիր, կու ան
իրենց սէրը, որով զիս տառապեցուցին։ Թշուառ եմ ես
եւ ողորմելի, Թշուառ եմ եւ գերի. հեռու ամէն բարիք-
ներից և ցանկութիւններից։ Ո՜հ անչափ երեւեցուցիր ինձ,
անյաղ գնացի հեշտութեանցդ եռեւիդ. բայց եւ քո էի.
ես քո Թագաւորն էի. Թող խրատէիր զիս եւ Թող մեռու-
ցանէիր քո մէջ։ Լաւ էր իմ դերեզման քո ծոց, քան
կեանքս գերի օտարներու մէջ։

Ը վարե՛ն զիս։ Քանի գնամ հեռու կ մնաս ինձմէ. ով
իմ Հայաստան. ես կուլամ իմ դժբաղդութիւնս, կուլամ ո՜հ
եւ քո Թշուառութիւնը. քո ապագայ վշտաց քո վաղահաս
տառապանաց ես օրինակ եմ։ Քո իշխանք մատիչ եւ
գքեզ կմատնեն։ Ը տառապիմ արեւի առաջ. կխաշիմ
խորշակներու մէջ. ցրտութեամբ պիտի սառչիմ։ Արտաս-
ուօք կնայիմ երկինքն ու արեւը. չորս կողմս օտար, Թշնա-
միք կենացս. ո՜հ երկինքն էլ ինձմէ օտար։ Ես սոված հա-
ցի կ կարօտիմ, ջուր չկայ ճանապարհիս վերայ. ոսկորներս
պիտի մաշին. քո ցաւից քո սաստիկ կարօտից աւա՜ղ պիտի
ցամաքի հոգիս։ Իմ գլուխ մերկ է Թագից, կապուած է
իմ շլինքս. մոխիր ուուօղ չ կայ որ ցանեմ երեսիս, սուր
ուուօղ չ կայ որ զարնեմ մէջ սրտիս։

Երկինք, այց արա։ Քո գատաստանն է այս. քո Հայ-
աստանին այց արա։ Ես եմ քո մեղաւոր. քո բարկութեան
ձեռք իմ գլխիս վերայ. քո ողորմութիւն տէր քո ողորմու-
թիւն Հայաստանին շնորհեա։

ՈՂԲ Ս. ՍԱՀԱԿԱՅ

Գրիգորի Աստուած. Հայաստանի Տէր. ինչի անտես ա. րիր քո հօտ, մերժեցիր քո սիրեցեալ ժողովուրդը։

Ընդունէ Տէր, իմ արտիս հառաչանքը. իմ արտասուքը զոր կ խառնեմ քո օրհնաբանութեանց մէջ, կ խառնեմ իմ ողբերգութիւնս քո փառաբանութեանց մէջ։

Ինչի ով Տէր, արհամարհեցիր այդպէս քո Հայաստանի սէրը. մերկացաւ յանկարծ իւր ամէն զարդերը։ Թողիր, փաղդի չպահեց նա իւր անարատութիւն. անարգեցիր նուրա՝ փառքն. գլորվեցաւ եւ շուտով պիտի կործանվի նորա գօրութիւն. փան զի անարգեց նա իրք գինքը. անարգեց քո պսակ—իւր թագը. մատնեց իւր հզօր թագաւորութիւն—Արշակունեան տունը. քեզնից քո Հայաստանի համար ընտրեցած սեպհական ժառանգութիւնը։

Ընդունէ իմ արտասուս, երկինք. իմ ողբերս հետ խառն արտասուս, զոր ի խորոց ցաւոցս կ հոսեմ քո առաջ, կ հոսեմ Հայաստանի վարդահաս թշուառութեանց եւ ապագայ աղէտից վերայ։ Ես հեռու նորա կրկից, ծարար եւ դառն վիճակիմը մէջ. կ տեսնամ նորա ցաւ, կուլամ հոգ նորա տառապանքը։ Եւ ինչի դու Տէր, դարձուցիր քո սիրոյ եւ ողորմութեան քաղցր աչերը։

Լսեցէք իմ աչկունք, ցօղեցէք արտասուք, արտասուք սփռեցէք Աստուծոյ աթոռին առաջ. խոնարհին ամպեր երկնքից. խոնարհին և տանեն իմ աչից ողբք իրենց թեւերուն վերայ. տանեն ցօղեն իրարու անձրեւ իմ արտից Հայաստանի վերայ։ Քո Հայաստան. ով Տէր, Հայաստան ահա մերձ է աւերման։ Հայաստանի անձն ահա իւր թա-

Սրիւնով են ծածկուած։ Հայն մէջ Հայաստանին դարձաւ Սրիւն. ամէն տեղ վազեց ամէն տեղ ներկեց։

Ո՞ւր են, ինչ եղան քո բարեվայելչութիւնք։ Ինչի՞ քո մանկանին ձեռն ի ծոց կ մուրայ. ինչի՞ քո այրին զրկանօք եւ արքատն տառապանօք կ մեռանին։ Նախարարն անիրաւ, գատաւորն անօրէն, ժողովուրդ ապստամբ. եւ կ մոլորին առանց պետականի եւ հովուականի։ Ո՞ւր են, ինչ եղան քո բիւրաւոր որդիք. որդիք քո փառաց եւ զօրութեան. ո՜հ ամէնքն էլ անկեալ, կործանեալ, ցրուեալ եւ դերի վարեալ։ Ո՛ւր էր Արշակունեաց հովանին, որ զձեզ պահպանէր այդ խորշակի հարուածէն. Արշակունոյն ձեռք ոչ զձեզ թափէր ձեր ոսոխէն։

Ինչի՞ է աւերակ դարձեր Արտաշատն. քանդուած է Դուին. յերկիր կործանված են Վաղարշապատու երկնանման Ալքունիքը։ Ո՞ւր են Այրարատայ բիւրաւոր փառաւոր ու զօրաւոր որդիք։

Ոչխարի՞ հօտ արդեօք, թէ Հայոց ժողովուրդն է այն որ բռնաւորին սուր բռնաւորի դաւազան կ զարնէ յառաջ կ վարէ. կ վարէ իբրեւ դերի իբրեւ յաւարի. յարեւելս կը տարածի յարեւմուտս կ սփռի. դիակ դիակի վերայ փռուած են դաշտերու մէջ Հայոց անձինքներ. կարմիր արիւնով ներկած են գետերը Հայոց սրիւններ։ Ո՜հ Տէր, ո՞ւր է սոցա հոգին, սոցա շունչն ու զօրութիւնը։

Երկինք, զարհուրելի է այս տեսիլ. սոսկալի երեւոյթ։ անհընարին տառապանք։ Սարսափելի՜ Տէր, մի՛ սրամիր, խնայէ։

Ո՞վ են նոքա. որ իբրեւ մանգաղաւ կ հնձեն Հայոց գլուխներ, կ հնձեն Հայոց արեւները։ Ո՞վ են նոքա. որ կը հարուածեն հալածեն Հայն իւր սեպհականութիւնից իւր ժառանգութիւնից, Ադենեան դրախտից. կ ապականեն Արարչի անկած այգին։

Գողեր կխաղան եկեղեցեաց բեմի վրայ, Առաջնորդ չկայ։
Աւազակներ պատած են ամէն կողմից. իշխան և դատաւոր չկայ։

Հայաստանի մէջ ամէքն էլ դարձան թշնամի. իրեանց շահուց եւ իրեանց փառաց միայն հոգացողք։

Ո՛հ, քո Հայաստան. Ա՜ծ իմ. քո Հայաստան կ քանդուի, քո եկեղեցին կ աւերի սոցա օրերով եւ սոցա ձեռներով։ Կուլամ. քո վիճակ. Հայաստան, քո թշուառ և դառն վիճակ։

Երկնից ուղեւոր, ո՞ւր կ տանես. ինչէ աւէր կ տանես այդ Նափորտ բեհեղեայ եւ Գուռնդ ոսկի։

— Ո՛հ կտանեմ. տար Քահանայապետութիւն Գրիգորի դաւակներէն. տար թագաւորութիւն Արշակունեանց տանէն։ Տա՛ր այդ սրբազան պարգեւները Հայաստանէն. տար թող պահպանէ ազգիդ Երկնից ձեռքը, մինչեւ Հայաստան հանէ դոցա արժանի որդիք։

Բայց իմ աչեր, ցօղեցէք արտասուք, արտասուք Հայաստանին, արտասուք իմ գլխին։ Ես Հայաստանից նորա սուրբ եկեղեցեաց եւ որդիքներից հեռի, Պարսից մէջ գերի։ Հայաստան ինձանից տարակաց, թշուառ եւ հեգ աչքերով թող լայ իւր գրկեալ Սահակը. լայ եւ իւր Արշակունին։ Լայ իւր փեսայն և թագաւորն, իւր դաւազան եւ իւր թագը։

Գրեցին
Աշակերտք Ժ. Վ. Զարագայ։

ԻՎԻՐՏՍՍ ՓՐԿՉԻՆ

Ո՞վ դու լուսավառ զարդ գիշերային,
Ո՞վ արծաթաձաւամ վարդագեղ լուսին.

Ո՞վ, որ խաչին փայտ շալկեր ի կռնակ
Կերթայ գողգոթայ սիրոյ նահատակ.
Գերագոյն սիրով սիրելոյն վառուած
Քաղցր են իւր վիշտեր, քաղցր է իւր հարուած։
Կընթանայ այլ զինչ. շունչը իւր հատեր,
Կրսոփպէ դահիճ, չեն զօրեր ոտեր.
Ծնկուընեն ի դող մերթ սահի կիյնայ,
Մերթ դողդոջելով ի վեր կր կենայ։
Ո՞վ, որ վեհ եւ հեզ, ահեղ եւ անձայն,
Կ'կրէ յանձին նախատինք այսքան.
Կարծես իբրու գառ անմրռունչ ու հեզ
Խոպանդատեղի վարի յողջակեզ։
Անցիր օ՜ն անցիր յառաջ մի այլ քայլ,
Ո՞վ տեսարանիս հոգւով սիրահար.
Տես՝ այն է Յիսուս խաչափայտ շալակ,
Կուտայ մեզ համար իւր արիւն փրկանք։

Արամ Բժիշկեան.
Աշակերտ. Ժ. Վ. Վարագայ։

ԻՔԵԶ ԱՆԿԱՅ ՀԱՅԱՍՏԱՆ

Իքեզ անկայ Հայաստան
Իքեզ մընամ Հայաստան։
Ապրիմ մեռնիմ քեզ համար.
Անձս ու հոգիս տամ յօժար։
Այ քիս բացի չբացի, զքեզ Հայաստան ես տեսայ.
Դեռ իմ երես ծաղր չեկած. ես ողբացի քո վերայ,
Լաց եւ ցաւեր, վիշտ ստատկ, ղիա պատեցին չորս ղեհեն։
Եւ Հայաստան գուշեցի, աւերակաց տալ ձեն։

Որդիքդ լինին լուսաւոր,
Եւ զքեզ առնեն փառաւոր։

Եղիշէ Սարկաւագ
Աշակերտ, Ա. Վ. Վարագայ։

Հէպէ-էալ ոգանաւոր հին յէ-ագիր պուղարանէմը օրինակվաց է. որոյ ազն ա- գրո-ած լիէ է- հին. բայց խրատն ա- իմաստը յարմար է նա է- ներկայ ժամանակիս։

Տ. Մկրտչի Նախշի ասացեալ
վասն ազահութեան։

Սղոմոն մայր իմաստութեան,
Առ մեզ խաւսի բան խրատական.
Թէ որ յաւելէ ի մեծութեան.
Նա ցաւք անձին յաւելանան։
Լաւ է մի բուռըն հանգըստեամբ.
Քան զերկու բուռն աշխատութեամբ.
Զոր Առաքեալըն հրամայէ,
Թէ կարեւորն է բաւական։
Աշխարհս տուն է լի դանձով,
Փարթամութեամբ եւ մեծութեամբ.
Այլ եւ սեղան է բարելից,
Որ ամենայն աք ցանկանայ։
Որք իմաստունք են հաւատով,
Նա զհարկեւորն առնուն զքնան.
Վայելեն ի հանգըստեան.
Եւ հասանեն ի յաւիտեան։

Եւ որք անմիտ են չարափառ.
Ագահութեամբքն կուրացան.
Գիրկ առին անցաւորիս,
Եւ իյալեաց մէջքն ծրփան։
Իսկզբաննէ մինչ իվախճան,
Ջինչ չարիք որ գործեցան.
Ագահութիւն եղեւ պատճառ,
Որ իփառացքն զբրկեցան։
Հայեաց եւ տես զնախկին Ադամ.
Որ իդրախտին Ադենական.
Աստուածային կերպարանաւք
Պայծառանայր արեւանման։
Կուրացաւ ագահութեամբ,
Եւ ցանկացաւ Աստուածութեան.
Որ թագաւոր էր եւ իշխան
Նա անասնոց եղեւ նման։
Ի դրախտէն իդուրս անկաւ,
Եւ սատանի եղեւ կրխան.
. . . . . .
. . . . . .
Տես զԿայէն զեղբայրասպան,
Թէ զինչ գործեց որ չէր արժան.
Նախանձեցաւ ագահութեամբ,
Եւ զսիրասնունդ եղբայրն էսպան։
Վասն այն զանէծքն ժառանգեց,
Մինչ որ Ղամէքն հարեալ էսպան.
Եւթն պատիժ որ Նա կրրեց,
Ամէնքն վասն ագահութեան
Հայեաց եւ տես զԱքար Ջարմեան,

Թէ խիստ հարուստ է եւ փարթամ,
Եւ տէր ընչից եւ մեծութեան.
Մրտաւքն սին է եւ ծակուչք,
Ջանայ զբրկել զամենեսեան։
Ոչ գիտէ ում ժողովէ,
Ջերդ զանասուն կայ իգարման.
Մոռացեալ է զաւր մահուան.
Եւ ոչ գիտէ նա դատաստան։
Ոմանք զաղաւթս ոչ կամենան,
Քարոզ լրսեն եւ մռմռան.
Պատարագէն փսխչեն գնան,
Ամէնքն վասն ագահութեան։
Երիցանին յիւրար կրռվան,
Բիր վերուցին եւ գաւազան.
Փեռեն մորուք կոտրեն բերան.
Ամէնքն վասն ագահութեան։
Անիծանեն եւ քրթմընջան,
Եւ բարկանան եւ ուրանան.
Կոծ ու ազաղակն վերանայ
Ամէնքն վասն ագահութեան։
Հատ վարդապետք որ նոր ելան,
Բանին եղեն վաճառական.
Քարոզեն զհաճոյս մարդկան,
Ամէնքն վասն ագահութեան։
Եպիսկոպոսք զկանոնն անցան.
Կաշառս առնուն կարմիր դեկան.
Պոռնիկացքն տան հրաման,
Ամէնքն վասն ագահութեան։
Գերի Նախաշ ողորմելի,

ՏԱՐԵԿԱՆ ՆԻՒԹՈՑ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ծանուցումն առ ընթերցողս. 1
Խորհրդածուն Վ. Արծրունոյն իւր ճանապարհորդուն մէջ. 3
Տեսարանք Հայրենի աշխարհաց — Երեւան քաղաք. 17
Հանդէս բարոյական առաքինութեանց. 22
Բարեւ. 27
Ինոր տարեդարձ Ազգային Սահմանադրութեան. 30
Վանեցւոց քանիմբ առածներ։ 32
Հոգի եւ զգացողութիւն Հայկազանց Ռուսաստանի. 33
Հայկազանց յառաջադիմութեան կեդրոն բուն Հայրենիք է. 43
Վերիմբ նախնեաց։ 56
Ժողովրդական դպրոց. 65
Տիֆլիս քաղաք. 76 · 116
Հայրենասիրութիւն եւ Հայրենիք. 87
Հայասիրի ողբ. 95
Ընձուկք սրտի առ ոսկերս Սենեքերիմայ սրբային Արծրունոյն։. 96
Ազգային երկպառակութիւն. 97
Ջողբ Երեմիայի վերածեալ ի Հայաստան. 109, 143 · 177
Հանելուկ. 352
Արամ Խաչակաս մարտին. 125
Ողբերգութիւն ի քաջագործին Մուշեղ Մամիկոնեան։ 127
Ազգային կեդրոնական վարչութիւն. 129
Այցելութիւն Հայկազանց առ Հայրենիս. 148
Բեթլեհէմի Վարդ. 154
Բաժակ Ներսէսի. 157
Առածք։ 160

ԱՆՁՆԱՆՈՒԷՐ
ԳՈՐԾԱԿԱԼՔ ԸՆԿԵՐԱԳՐՈՒԹԵԱՆ

ՎԱՆ·Պ·Մկրտիչ Տ·Աստմեան ։

ԲԱՂԷՀ·Պ·Տիգրան Կարիակէեան Պօլսեցի ։

ՄՈՒՇ·Աղա Վարդան Մամիկոնեան ։

ԿԱՐԻՆ·Խաչատուր Խան Տ·Ներսիսեանց ։

ՏՐԱՊԻԶՈՆ·Պ·Սահիան Մ·Յակոբեանց ։

ՊՕԼԻՍ·Ղեւոնդ Վարդապետ Միաբան Վարագայ ։

ՏՓԽԻՍ·Պ Համբարձում Էնֆիաճեանց Հրատարակիչ Կրօնական Հայոց աշխարհի պատուական ամսագրոյն. եւ Պ·Գարեգին Մուրատեանց։

ԳԱՆՁԱԿ·Պ·Ներսէս Տ·Նիրսիսեանց ։

ՂԱՐԱԲԱՂ·Ընթերցասիրաց Թանգարան ։

ԱՂԵՔՍԱՆԴՐԱՊՕԼ Տ·Սիմէոն քահանայ Օրէնուսոյց Յարքունի ուսումնարանին ։

ՆՈՐ ՊԱՅԱԶԻՏ·Աղա Բարսեղ Արծրունեաց ։

ԵՐԵՒԱՆ·Պ·Համբարձում Թադէոսեան ։

ՆԱԽՋԵՒԱՆ·Մ·Մկրտիչ Թուշեան ։

ՎԵՐԻՆ ԱԳՈՒԼԻՍ·Պ·Գասպար Ասլանեանց ։

ՆԵՐՔԻՆ· —— Ուսումնասէր Տ·Յակոբ քահանայ Տ·Անդրէասեանց ։

ԴԱՎՐԷԺ·Պ·Մաթէոս Նազարեանց, Ղարապաղցի Վաճառական։

ՍԱԼԱՄԱՍՏ·Աղա Պաապ Արզումանեան ։